ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոս, 2019 թվականի № 43-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԸԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի № 31-Լ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԸԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի № 46-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի հուլիսի 10-ի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության նոր վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ» № 31-Լ որոշման № 1 հավելվածով սահմանված վարչակազմակերպական կառուցվածքը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 25-ի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության նոր հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ» № 46-Լ որոշման № 1 հավելվածով սահմանված հաստիքացուցակը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված հեռուստառադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերի նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածում ներկայացված նախահաշվի:
4. Հաստատել Ընկերության կողմից ներկայացված ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման նախահաշվի փոփոխությունը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածում ներկայացված նախահաշվի:

5. Հիմք ընդունելով սույն որոշման 1-4-րդ կետերի իրականացումից բխող, ինչպես նաև Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 48-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 6 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 7 հավելվածի:

6. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

7. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

20 օգոստոս, 2019 թվականի

ք. Երևան